

ՎԱԶԵ ԱՔԵՂԱ ՄԿՐՏՁՅԱՆ

**ՅԵՐԵՏԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԻՅ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
ԴԱՐՁԻ ԵԿԱՍՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՒ ԴՐԱ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ
ՄՆԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՈՇԻ «ԹՈՒՂԹ ԱՌ ՎՐԱՅԻՄՆ՝
ՅԱՂԱԳԱ ՈՒՂԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՀԱԲԱՏՈՅ» ԵՐԿՈՒՄ**

Սկիզբը՝ թիվ Գ.

Հայոց եկեղեցական կանոնագրքում գոյություն չունի Կ. Պոլսի տիեզերաժողովի 7 կանոն, հավանաբար կամ դիտվել է այն շատ երկար իբրեւ կանոն եւ կամ հիշյալ կանոնում նշված հերետիկոսությունները համարվել են օտար մեր երկրի համար¹: Սակայն մեզանում Կ. Պոլսի տիեզերաժողովի կանոնախումբը բաղկացած է միայն 3 կանոնից, որի 2-րդ կանոնի մեջ միացած են 2-րդ եւ 3-րդ կանոնները, ուստի մեր Կանոնագրքում ստացվում է 4 կանոն, իսկ 5-րդ, 6-րդ եւ 7-րդ կանոնները չկան: Վերջիններս առկա են միայն հունարեն ձեռագրերում եւ պատկանում են 382 թ Կ. Պոլսի տեղական ժողովին: Այս 7 կանոններից կազմված կանոնախումբն ընդունվել է միայն Ուղղափառ եկեղեցում, սակայն, ինչպես առաջիկայում կփորձենք ցույց տա, նաեւ իր անդրադարձն է ունեցել հայ եկեղեցական իրականության մեջ՝ ի մասնավորի՝ Մխիթար վարդապետ Գոշի «Առ վրացիսն» թղթում:

Կ. Պոլսի այս 7-րդ կանոնն ուսուցանում է, թե ինչպես պետք է ընդունել այն հերետիկոսներին, որոնք վերադառնում են ուղղափառ հավատքին: Կանոնն այդպիսիներին բաժանում է երկու խմբի: Նրանցից մի մասի վերաբերյալ հրահանգվում է վերստին չմկրտել, սակայն պահանջվում է գրություն, այսինքն՝ գրավոր վկայություն, ուր նշվում եւ դատապարտում են իրենց շարափառ հավատքը, ինչպես նաեւ պետք է նշովի արժանանա ամեն հերետիկոսություն: Այդ խմբին են պատկանում

¹ ՏՆՆ ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ, Հայոց եկեղեցական իրաւունքը, Սբ. Էջմիածին, 2009, էջ 146:

արիոսականները, մակեդոնականները, նովատիանոսականները, որոնք իրենց մաքուրներ էին անվանում, սաբբատիոսականները, որոնք նովատիանոսականների մի ճյուղ էին ու իրենց անուն ստացել են նովատիանոսական քահանա ոմն Սաբբատիոսից, եւ առավել հակված էին հրեական սովորությունները պահելուն (Զատիկի տոնը նշում էին հրեաների հետ եւ այլն), տասնչորսականները կամ տետրադիտները, որոնք Զատիկը տոնախմբում էին Նիսան² ամսվա 14-ին, որտեղից եւ առաջ է եկել իրենց անվանումը եւ ապոդինարականները, որոնց հիմնադիրը Ապոդինար Լաոդիկեցին է³։ Իսկ երկրորդ խմբի մեջ մտնող հերձվածները պատավորվում էին կրկնամկրտությանը ընդունվել եկեղեցական կյանքի մեջ. դրանք էին՝ եւնոմիականները, որոնց վերաբերյալ կանոնը հատուկ մատնանշում է, թե երեքի փոխարեն մեկ ընկղմմամբ էին մկրտությունը կատարում (կանոնը, ըստ երեւույթին, ցանկանում է ընդգծել Մկրտության արարողության կատարման ոչ ճիշտ կարգը որպէս պատճառ կրկնամկրտության), մոնտանականները, որոնք անվանվում են նաեւ փոլուգացիներ ու պեպուգացիներ եւ սաբելականները, որոնք, համաձայն կանոնի, որդեհայրության հերձվածի մեջ են⁴։ Ահա այս խմբում ընդգրկված հերետիկոսությունների հետեւորդներին հարկավոր է ընդունել իբրեւ հեթանոս, որն ենթադրում է է երախայից կարգի պատրաստության շրջանը՝ քրիստոնեական ուղղափառ հավատքի եւ աստվածային խորհուրդների ուսանում։

² Նիսան ամիսը, ըստ հրեական օրացույցի, աստվածաշնչյան առաջին ամիսն է, իսկ նույն ամսվա 14-ը հրեական Զատիկն է՝ Փեսախը կամ Պասեքը, որը հրեաների եգիպտական գերությունից ազատագրման հիշատակի տոնն է։

³ Ապոդինարի քրիստոսաբանական հայացքները բավականին խորթ ու հակառակ էին եկեղեցական ուղղափառ ընկալմանը, ինչի համար դատապարտվեց Կ. Պոլսի 2-րդ տիեզերաժողովում։ Համաձայն Ապոդինարի վարդապետության՝ Հիսուս Քրիստոսի մեջ մարդկային բնությունը չունի բանական հոգի, եւ Բանն Աստված ընդամենը միավորվել է շնչավոր մարմի հետ։ Ապոդինարի մասին տես Священник Владимир Шмалий, Аполлинарий, Православная Энциклопедия, т. 3, Москва, 2001, էջ 61–62։

⁴ Սաբել Լիբիացին (Բ.–Գ. դարեր) համարվում է հիմնադիրն իր իսկ անունով կոչված սաբելական հերետիկոսության, որն ուղղափառ վարդապետությանը հակադրում էր իր հայրաշարժար միապետական ուսմունքը՝ մի դեմքի մեջ միացնելով Աստվածության երեք Անձերին եւ ըստ որի՝ Աստված հանդես է գալիս տարբեր ժամանակ առանձին դեմքերով՝ թե՛ որպէս Հայր Աստված, թե՛ որպէս Երրորդություն եւ թե՛ նույնիսկ որպէս Չորրորդություն։ Իր ուսմունքի մասին տես Л. Карсавин, Святые отцы и учителя Церкви (раскрытие православия в их творениях), Москва, 1994, էջ 83, А. А. Спасский, История догматических движений в эпоху Вселенских соборов (в связи с философскими учениями того времени). «Тринитарный вопрос» (История учения о Св. Троице). Изд. 2-е. Сергиев Посад, 1914, էջ 110–117։

Վերոնշյալ 7-րդ կանոնը գրեթե բառացի իր արտահայտումն է գտել քաղկեդոնադավան Եկեղեցիների ընդունած Տրուլլյան ժողովի⁵ 95-րդ կանոնում՝ պարզապես կանոնի վերջնամասում ունենալով հետեւյալ հավելումը՝ «Այդպես պետք է վերաբերվել նաեւ (այսինքն՝ ընդունել որպես հեթանոս եւ կրկնամկրտել. — Վ. Ա. Մ.) մանիքեականներին, վաղենտիանոսականներին, մարկիոնականներին եւ սրանց նման մյուս հերետիկոսներին: Իսկ նեստորականները պետք է գրավոր խոստովանություն ներկայացնեն եւ նզովեն իրենց հերետիկոսությունը՝ եւ՛ Նեստորին, եւ՛ Եստիֆեսին, եւ՛ Դիոսկորոսին, եւ՛ Սեւերիանոսին եւ մյուս այսպիսի հերետիկոսական առաջնորդներին եւ նրանց համախոհներին եւ բոլոր վերոնշյալ հերետիկոսներին եւ հետո միայն ընդունեն Սուրբ Հաղորդություն»⁶:

Կանոնի այս երկրորդ հատվածում հիշատակված են այն հերետիկոսները, որոնք առաջ են եկել երկրորդ տիեզերական ժողովից հետո, ինչպիսիք են՝ մանիքեականները, վաղենտիանոսականները, մարկիոնականները ու սրանց նման մյուս հերձվածները, որոնց ուսմունքում քրիստոնեությունից գրեթե ոչինչ չկար, ուստի հարկավոր էր նրանց ընդունել միայն մկրտության միջոցով: Իսկ ահա նեստորականներին եւ մոնոֆիզիտներին (Եւտիքեսի, Դիոսկորոսի եւ Սեւերիոսի հետեւորդներին) պետք էր ընդունել ապաշխարության միջոցով եւ իրենց իսկ հերձվածը մերժելով, որից հետո նրանք արժանի կլինեն ստանալու Սբ. Հաղորդություն:

Ահա երկու ժողովական կանոնների այս ամբողջությունը կարող է ծառայել եւ ծառայեց Հնդհանրական Եկեղեցու համար որպես ուղեցույց հետագա դարերում առաջ եկած հերետիկոսների ընդունման հարցում: Անշուշտ, չնայած շատ հերձվածներ, որոնք թվարկված էին հիշյալ կանոնում, այլեւս հեռացել են պատմության թատերաբեմից, սակայն հայտն-

⁵ Եկեղեցական ժողով Կ. Պոլսում 692 թ. Հուստինիանիոս Բ. կայսեր օրոք, որի պալատում տեղի է ունեցել այդ ժողովը: Ժողովը կոչվել է Տրուլլի, քանի որ ժողովի աշխատանքներն ընթացել են կայսեր տրուլլյան սրահում (հուն. «ο τρούλλος» նշանակում է «կամար»): Քանի որ դոգմատիկ հարցերի կարգավորման համար գումարված⁷ Կ. Պոլսի 2-րդ (քաղկեդոնական եկեղեցիների համար 5-րդ տիեզերաժողովը, 553 թ.) եւ Կ. Պոլսի 3-րդ ժողովներում (6-րդ «տիեզերաժողովը», 691–692 թթ.) չեն ընդունել որեւէ կարգապահական բնույթի կանոններ, ուստի Հուստինիանոս Բ. կայսրը հրավիրեց Տրուլլյան ժողովը, որպեսզի 5-րդ եւ 6-րդ «տիեզերաժողովների» որոշումներում ավելացվեն նաեւ կարգապահական նշանակության կանոններ, որի համար այս ժողովը կոչվում է նաեւ հինգերորդ-վեցերորդ «տիեզերաժողով»: Այս ժողովի մասին տես Օ. Селейдак, Трулльский собор, Католическая Энциклопедия, т. IV, Москва, 2011, էջ 1477–1478.

⁶ Տե՛ս «Правила Святых Вселенских соборов с толкованиями», էջ 586:

վում են նորերը, եւ ժողովական այս ցուցումն իբրեւ ընդհանուր պահանջ կարգավորում է Եկեղեցու վերաբերմունքը հետագայում երեւան եկած բազմապիսի հերետիկոսների եւ հերձվածների նկատմամբ, ինչպես նաեւ առավել որոշակի ներկայացնում է, թե ինչպիսի արարողակարգով է հարկավոր ընդունել նրանց, որոնք կցանկանան դառնալ Եկեղեցու անդամ⁷:

Հայոց Եկեղեցին եւս անմասն չի մնացել համաքրիստոնեական եկեղեցական կյանքում տեղ գտած զանազան անցուղարձներից ու զարգացումներից, ասենք հերետիկոսների՝ դեպի Եկեղեցի վերադարձի առումով: Մեր եկեղեցական պատմության մեջ, իբրեւ գրավոր վկայություն եւ որոշակի իմաստով նաեւ ուղեցույց, այս հարցի վերաբերյալ հիշատակելի է ներհուն եկեղեցական գործիչ, հայտնի կանոնագետ Մխիթար վարդապետ Գոշի նշանավոր «Թուղթ առ վրացիսն» գրությունը, որում հեղինակն ամփոփ, սակայն բովանդակալից կերպով ներկայացնում է հերետիկոսական համայնքից դարձի եկողների համար նախատեսված եկեղեցական ծիսակարգը:

ԺԱ. դարավերջից Կովկասում հայտնվեց քաղկեդոնադավան նոր, զորեղ քաղաքական միավոր՝ Վրաց թագավորությունը, որի հետ հայ տեղական իշխանների ու իշխանական տների համագործակցությունը չէր կարող չառնչվել դավանական տարբերության սուր խնդրին: Հենց այս համապատկերում է արժեւորելի Մխիթար Գոշ վարդապետի կանոնաստեղծ գործունեությունը, որի նպատակն էր Հայ եւ Վրաց Եկեղեցիների միջեւ փոխըմբռնման ու հարգանքի մթնոլորտի հաստատումը՝ կրկնամկրտության արատավոր երեւույթը վերացնելու միջոցով⁸: Գոշի Թուղթը իր գիտական հրատարակության պատրաստող պրոֆ. Պարույր Մուրադյանը Առաջաբանում բերում է վրաց եւ հայոց միջավայրերում կրկնամկրտության երկու օրինակ, որոնք լավագույնս վկայում են ծայրահեղական այդ գաղափարների գործնական կիրառումը Ժ.—ԺԱ. դարերում: «Ս. էքվթիմեի եւ Ս. Գերոգիի» վարքում նշվում է Աթոսի վրացական վանքերից մեկում Զոչիկ իշխանաց իշխանի գանձապետաց ավագ Գյուրպել հայի կրկնամկրտության մասին. կրկնամկրտության համար հիմք է դարձել

⁷ *Sts* Архимандрит Амвросий, К вопросу о чине принятия в православную Церковь лиц, приходящих к ней из иных христианских церквей, журнал Весник РХД, Париж — Нью Йорк — Москва, 1996, № 173, էջ 103.

⁸ *Sts* ՇԱՀԵ Ս. ՎՐԳ. ԱՆԱՆՅԱՆ, Մխիթար Գոշը եւ ալլադավանների մկրտության խնդիրը Հայոց եկեղեցում, Բանբեր Մատենադարանի, հ. 31, Երեւան, 2021, էջ 85—86:

Գյուրպելի հայ քրիստոնյա լինելու հանգամանքը: Հայկական միջավայրում Ժ. դարի քաղկեդոնականների համար կրկնամկրտություն իրականացնելու որոշումը կայացվել է Հայոց Անանիա Ա. Մոկացի (946–968) կաթողիկոսի օրոք՝ հրավիրյալ ազդեցիկ հոգեւորականների ժողովում⁹:

Դատելով Գոշի իսկ վկայություններից, կարելի է եզրակացնել, որ երկուստեք կրկնամկրտության այս սովորույթը տիրապետող էր նաեւ իր «Թղթի» գրության ժամանակ. «Եւ արդ՝ Յոյնք եւ Վիրք եւ Հայք զմկրտութիւն միմեանց կամին լուծանել՝ կրկին մկրտելով զմիմեանս, զոր ընդդէմ կանոնաց գործեն. զի մի է Քրիստոս եւ մի մկրտութիւն¹⁰: ...արդ, յայտ է, զի Յոյնք եւ Վիրք եւ Հայք յոյժ մեղանչեն զմիմեանս մկրտելով եւ աւծանելով, զի Հայք ամբաստանեն զՅոյնս եւ զՎիրս...»¹¹:

Մխիթար Գոշի համոզումով՝ հայերի նկատմամբ վրացիների բացասական վերաբերմունքն ու կրկնամկրտության արատավոր երեւույթը հետեւանք է նրանց՝ հույներից ունեցած ազդեցության. «...որ ոչ սակաւ թշնամութեամբ վարին ընդ Հայս, աշակերտելով Յունաց»¹²: Բնականաբար, վրացական մատենագրությունն այդ ժամանակ զարգանում էր հիմնականում հունարենից վրացերեն կատարված թարգմանությունների շնորհիվ. ասվածը վերաբերում է նաեւ վրացական միջավայրում հակահայկական գրվածքների ստեղծմանն ու տարածմանը¹³:

Մխիթարը հստակորեն նշում է, որ կրկնամկրտության սովորությունը հետեւանք է անգիտության, քանի որ արդեն իսկ Եկեղեցու հայրերը մշակել են համապատասխան աղոթակարգեր ու կանոններ, որոնց համաձայն էլ նա շարագրում է իր թղթի՝ հերձվածողների մկրտությանը վերաբերող հատվածը. «Վասն այնորիկ եւ զաղաւթսն գրեցաք ի թղթի աստ, զոր արարեալ է հարցն առաջնոց՝ փոխանակ մկրտելոյ ընթեռնուլ ի վերայ դարձելոցն ի ժողովոյն Քաղկեդոնի, որ եւ զնոյն չափ ունի յայլոց ազգաց, զոր անգիտացեալ Յոյնք եւ Վիրք՝ պատրեալսն ի նոցանէ. զՀայ ոք մկրտեն, եւ Հայ ոք զնոսա...»¹⁴: Գոշը խորհուրդ է տալիս Զաքարե

⁹ Պ. ՄՈՒՐԱԳՅԱՆ, ԺԱ.-ԺԳ. դարերի հայ-վրացական դավանական խնդիրները եւ Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը, էջ 10:

¹⁰ Նույն տեղում, էջ 254:

¹¹ Նույն տեղում, էջ 259:

¹² Նույն տեղում, էջ 196:

¹³ Shtu M. Рапавва, Полемиические сочинения против армянского монофизитства в древне-грузинской письменности, Вестник ПСТГУ I: Богословие. Философия, 2008, 3 (23), էջ 13–29:

¹⁴ Պ. ՄՈՒՐԱԳՅԱՆ, նշ. աշխ., էջ 196:

եւ Իվանե Զաքարյան իշխաններին, նպատակահարմարության դեպքում, թուղթը թարգմանաբար ընթերցել վրաց հոգեւորականների առաջ¹⁵:

Առանձնակի ուշագրավ է այն փաստը, որ Կ. Պոլսի տիեզերաժողովի 7-րդ եւ Տրուլլան ժողովի 95-րդ վերոնշյալ կանոնները, որոնք բնավ տեղ չեն գտել Հայոց եկեղեցական կանոնախմբում (ենթադրելի էր նաեւ հայ եկեղեցական իրականության մեջ), սակայն իրենց գործածական անդրադարձն են ունեցել Գոշի այս գրության մեջ: Չնայած այս իրողությունը կարելի է թեապես բացատրել այն հանգամանքով, որ հեղինակն իր գրությունն ուղղում է քաղկեդոնադավան վրաց եկեղեցուն, ուստի առավել նպատակահարմար է վրաց կողմից ընդունված կանոններով հիմնավորել եւ հաստատել հայերի կրկնամկրտության հակականոնական լինելը: Բայց եւ այնպես չի կարելի միանշանակորեն հերքել, որ այս կանոններն իրենց գործածությունը չեն գտել Հայոց եկեղեցական միջավայրում գոնե որպես ուղեցույցներ, թեպետ քաղկեդոնականների համար ընդունելի Տրուլլան ժողովը ներգրավված չի մեր կանոնական ժողովների անդաստանում: Գոշի ներկայացրած՝ այլադավանների հատուկ ծիսակարգերի քննությանն անդրադառնալով՝ անվերապահ է դառնում այն փաստը, որ Գոշն իր այդ աղոթքները թարգմանաբար քաղել է օրթոդոքս սկզբնաղբյուրից: Վրացական հավանական սկզբնաղբյուրը «Նզովումն Հակոբիկյանների եւ ամենայն միաբնակաց, որոնց հետ են նաեւ Հայերը» երկն է, որը մաս է կազմում Արսեն Իդալթոյեցու «Դոգմատիկոն» երկի: Մ. Ռապավայի պնդմամբ՝ վրացերեն այս երկը բաղկացած է երկու մասից, առաջին հատվածը համընկնում է Կեղծ-Սահակ Հայոց կաթողիկոսի Գ. ճառի հետ, երկրորդը՝ օրթոդոքս ծիսարանների, որտեղ մանրամասնորեն նկարագրված է այլադավաններին Օրթոդոքս եկեղեցի ընդունվելու կարգը¹⁶:

Դառնալով Գոշի գրության մեզ հետաքրքրող հատվածին՝ կրկնամկրտության եւ ընդհանրապես այլադավանների մկրտության հարցին, տեսնում ենք, որ Գոշը հետեւում է Հայ եւ Բյուզանդական եկեղեցիներում տարածված նախկին ավանդությանը, որի համաձայն կար դարձի եկող այլադավանների համար սահմանված երեք կարգ: Գոշը, անդրադառնալով հույների եւ վրացիների (ընդհանրապես քաղկեդոնականների)՝

¹⁵ Նույն տեղում, էջ 197:

¹⁶ Shtu M. Rapaва, Поlemические сочинения против армянского монофизитства в древне-грузинской письменности, էջ 10–13:

Հայոց մկրտությունն անարգելու եւ վերստին մկրտելու հանգամանքին, նշում է, թե սա հակառակ է կանոններին: Երբ Վրաց Եկեղեցին հայ քրիստոնյային կրկնամկրտում է, զոր Բրիստոսից է հրաժարվել տալիս եւ զոր Բրիստոսին՝ խոստովանել, քանի որ մեկ է Բրիստոս եւ մեկ է մկրտությունը (Եփես. Դ. 5): Ուստի այդ պատճառով հարկ է համարում իր այս գրությամբ ցույց տալ, թե Ընդհանրական Եկեղեցու հավատքին դարձողներից ովքեր են արժանի մկրտության եւ որոնց է հարկավոր սուրբ յուզով օծել, կամ որոնց պետք է ընդունել պարզապես միայն աղոթքով: Սուրբ Մկրտության խորհրդի առնչությամբ Գոշը հետաքրքրական տարբերակում է դնում՝ տալով զատորոշում, թե այլ է քրիստոնյայի զավակի մկրտությունը, եւ այլ է՝ հրեայի եւ հեթանոսի. վերջիններիս համար նա գործածում է «մկրտել եւ լուսաւորել սուրբ աւագանան» արտահայտությունը¹⁷: Թերեւս այս «լուսաւորել» բառի ներքո պետք է հասկանալ ոչ միայն Սուրբ Մկրտության խորհրդի շնորհաբաշխական իմաստը, այլեւ նույն հրեային եւ հեթանոսին քրիստոնեական լույս վարդապետությամբ կրթելն ու ուսուցանելը, այլ խոսքով՝ Երախայից պատրաստության շրջան անցնելը:

Գալով հերձվածողներին՝ Գոշը գրում է. «Այսպէս պարտ է ընդունել զհերձուածողս յԵկեղեցի Աստուծոյ՝ զԱրիանոսս, զԿաթարոսս, զՄակեդոնիանոսս, զՍամբատիանոսս¹⁸, զՆաւատիանոսս, զչորեքտասանեայս եւ որք զչորորորովիւն խոստովանին եւ զԱպաղիւնարիտս»¹⁹: Նրանք, ովքեր այս վերը թվարկյալ հերձվածողական ուղղություններից են եկել, հարկավոր է նախ նզովեն այն հերձվածը, որի մեջ իրենք մոլորվելով հայտնվել են, ապա այն բոլոր հերձվածներն ու հերետիկոսությունները, որոնք հակառակ են Բրիստոսի Եկեղեցու ուղղափառ վարդապետությանը, որից հետո նրանց պետք է ուսուցանվի Եկեղեցու ճշմարիտ հավատքը: Այնուհետեւ քահանան սուրբ Մյուռոնով կատարում է տերունական կնիքը ճակատին, սրտին եւ մնացյալ բոլոր զգայարաններին: Այս ամենից հետո նորագարծը որպէս «լուսաւորեալ» կարող է գալ հաղորդվելու Բրիստոսի փրկարար ճշմարիտ մարմնին ու արչանը: Սակայն նախքան Սուրբ Դրոշմի խորհրդի կատարելը, ինչպէս պատվիրում է Գոշը, նորա-

¹⁷ Նույն տեղում, էջ 254:

¹⁸ Ճիշտ անվանումը «սամբատիոսականներ» է:

¹⁹ Պ. Մ ՈՒՐԱԳՅԱՆ, նշ. աշխ., էջ 255:

դարձը պարտավոր է տասնհինգ օր շարունակ պահեցողությամբ ապրել²⁰՝ մասնակցելով առավոտյան ու երեկոյան ընդհանրական աղոթքներին, սովորելով եւ մեր եկեղեցական կարգերն ու հետեւելով սովորույթներին: Պահեցողության օրերը լրանալուց հետո նորադարձին քահանան կանգնեցնում է Մկրտության Սուրբ ավազանի առջեւ եւ ասել է տալիս հետեւյալ աղոթքը.

«Նզովեալ (այս անուն) հերձուած, յորում մերն էր եւ հաւանակիցք նորին եւ խորհողք զնորայսն, քանզի հրաժարիմք ի նմանէ եւ յամենայն հերձուածական աղանդոյն եւ հաւատամք ի մի Տէր, ի միասնական Սուրբ Երրորդութիւն ըստ աւանդութեան սուրբ հարցն ուղիղ դաւանել զԲանն ճշմարտութեան»²¹:

Այնուհետեւ քահանան մեկ առ մեկ ասել է տալիս ուղղափառ վարդապետությունը, որից հետո երեք անգամ քահանան հարցնում է. «Հավատո՞ւմ ես միասնական Սուրբ Երրորդությանը», իսկ նա պատասխանում է՝ հավատում եմ: Այստեղ Դոշն իր նրբանկատությամբ հավելում է՝ եթե նորադարձը լեզուն հասկանալու խնդիր ունի, ապա հարկավոր է թարգմանիչ կարգել: Սա կատարելուց հետո քահանան ծնկի է իջեցնում նորադարձին եւ ձեռքը դնելով գլխին՝ այս աղոթքն է կատարում.

«Աստուած, Փրկի՛չ մեր, որ կամիս զամենայն մարդկան զկեալ եւ ի գիտութիւն ճշմարտութեան գալ, ընկալ զծառայս Քո (զայս անուն) զհազիւ կարացեալս մաքրել ի մոլորութենէ եւ ցանկացեալ գալ ի գիտութիւն Քոյոյ ճշմարտութեանդ, քանզի Դու ասացեր՝ նաեւ այլ եւս ոչխարք են Իմ, որք ոչ են յայսմ գաթէ, եւ զայն եւս պարտ է Ինձ ածել այսր, եւ եղիցին մի հաւտ եւ մի հովիւ: Հովուեա՛ զսա առ Ի Քէն գիտութեամբ ճշմարտել զլաւն ներգործութեամբ սրբոց Քոց եւ փառաւորեալ առաքելոց Քոց եւ արժանաւորեա՛ զսա կնքոյ Քո աստուածային մեռոնիդ եւ Սրբոյ Հոգւոյ տնկարկութեանդ եւ հաղորդութեան պատուական մարմնոյ եւ արեան Քրիստոսի Քո եւ վերայայտեա՛ զսա կատարեալ ծառայ Քո, զի ընդ հաւտի Քո զուգաթուեսցի եւ սա ի փառս եւ ի գովութիւն մեծութեան Քո, զի Քո է զաւրութիւն եւ փառք այժմ եւ յաւիտեանս յափառենից, ամէն»²²:

Սույն աղոթքի ընթերցումը կատարելուց հետո քահանան սկսում է սրբալույս Մյուռոնով օծումը, որի ավարտին ասում է հետեւյալ աղոթքը.

²⁰ «Արժան է պահել աւուրս եժ.», Տէն նույն տեղում: Ինքնին ընկալելի չէ, թե ինչով է պայմանավորված պահեցողության օրերի տասնհինգ լինելը:

²¹ Նույն տեղում, էջ 255–256:

²² Նույն տեղում, էջ 256–257:

«Տէ՛ր Աստուած մեր, որ արժանի արարեր վերայայտեալ կատարել ծառայի Քո (զայս անուն) ի ձեռն որ ի Քեզ ուղղափառ հաւատով եւ կնոյ սուրբ մեռոնի, Դու Տէ՛ր ամենայնի, զառ ի Քէն ճշմարիտ հաւատ ի սմա հաստատեա՛ եւ զարգացո՛ զսա արդարութեամբ եւ ամենայն շնորհաւ զարդարեա՛, քանզի արհնի եւ փառաւորի ամենապատիւ եւ մեծավայելուչ անունդ Հաւր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն»²³:

Այս ամենը կատարելուց հետո արդեն նորադարձին տրվում է Սուրբ Հաղորդութիւն: Հետեւապես, համաձայն Գոշի այս գրութեան, կարելի է հստակորեն արձանագրել, որ վերոնշյալ խմբին հարող հերձվածներին ամենեւին հարկավոր չէ վերստին մկրտել ջրով, այլ սոսկ սրբալույս Մյուռոնով կատարել Սուրբ Դրոշմի խորհուրդը:

Նեստորականների եւ Եւտիքեսականների առնչությամբ Գոշն իր այս գրութեան մեջ շարադրում է հետեւյալը. «Իսկ Նեստորիանոսաց եւ Եւտիքիանոսաց եւ այլ նոյնպիսի հերձուածողաց տալ ի խոստովանութիւն եւ նզովել զհերձուածն, յորում են եւ զամենայն հերձուածս, իսկ աւծման չեն պէտք»²⁴: Սույն հատվածից հստակ երեւում է, որ մկրտելու եւ դրոշմելու հարկ չկա, այլ պետք է միայն պարզապէս նզովեն իրենց եւ մյուս հերձվածները, խոստովանեն ուղղափառ վարդապետութիւնը, որից հետո քահանան նրանց վրա պետք է կարգա հետեւյալ աղոթքը.

«Տէ՛ր Աստուած զաւրութեանց, Աստուա՛ծ ապաշխարողաց, որ զամենայն մարդիկ կամիս զի կեցցեն եւ ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն, որ զպատրեալս, ի մտախաբ վարդապետութենէ դարձուցանես ի փրկութիւն. Դու, Տէ՛ր ամենակալ, ընկալ զծառայս, որ զերծաւ յորոգայթից սատանայի եւ ընթացաւ ի սուրբ Եկեղեցի Քո, վասն որոյ պաղատիմք եւ աղաչեմք զՔեզ, արա՛ զսա լինել ի համար ընդ այնոսիկ, որ արեամբ Քո փրկեցան եւ պահեա՛ զսա ի մահաբեր մեռից քշնամայն. զի մեռեալ էր եւ եկեաց, կորուսեալ էր եւ գտաւ: Եւ արդ, տո՛ւր սմա անբիծ եւ անարատ խոստովանել զՔեզ եւ ճշմարտութեամբ փառս տալ Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից»²⁵:

Իսկ ահա այս խմբի մեջ մտնող հերետիկոսներին, որոնք են «զՍիւմոնացիս եւ զմիւս Սիմոնացիս եւ զԿեղեղացիս եւ զԵնոմիանոսս, որք

²³ Նույն տեղում, էջ 257:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում, էջ 257–258:

միոյ հակառակ երկու մկրտին, եւ զՄոնտանոսս եւ զԱրտեմոնացիս եւ զՍաբելացիս եւ զՓռիւզացիս, որք զորդեհայրութիւն ուսուցանեն եւ որք ի Պաւլոսէ Սամոստացւոյ են խաբեալք, զՄանիքեցիս եւ զՄանինեցիս, զՄարկիոնացիս, զՎաղենտիանոսս, զՊեպուզացիս, զՓիարտիանոսս, զՈնոտացիս, զԱպաւղինարոսս, զԿերինթիանոսս, զԵրդինացիսս, զՄենանդրացիսս եւ որ այլ այսպիսի հերձուածող իցէ», ²⁶ հարկավոր է որպէս հեթանոս կամ հրեա մկրտել: Իր գրութեան երկար չիտնելու պատճառով՝ Գոշը նշում է. «Եւ թէ զհինչ են աղանդք նոցա եւ որպէս ի դէպ է մկրտել եւ յոր աւուրս, զի մի լիցի երկարություն ճառի՝ չառաք ի մէջ» ²⁷: Ստացվում է հետեւյալը, որ այս խմբի մեջ ընդգրկված հերետիկոսություններից ու հերձվածներից դարձի եկողը ոչ միայն պետք է անպայմանորեն մկրտվի, այլեւ նրա մկրտութեան ծիսակարգը որոշակի առումով տարբերվում է սովորական մկրտությունից, այլ խոսքով՝ «քրիստոնյայի զավակի» մկրտությունից եւ այն չի կարող կատարվել ամեն օր, այլ գոյություն ունեն հատուկ օրեր՝ համաձայն Գոշի գրութեան:

Եթե փորձենք ամփոփել Միսիթար վարդապետ Գոշի «Առ վրացիսն» գրութեան այս հատվածը, ապա միանգամայն հստակ է հեղինակի նպատակն ու միտումը՝ կանոնական հիմնավորմամբ փաստել, որ Հայ եւ Վրաց Եկեղեցիների երկուստեք իրականացրած անօրինական կրկնամկրտությունները ոչ միայն հաճելի չեն Աստծուն, այլեւ դեմ են սուրբ հայրապետների սահմանած կանոններին: Եթե անգամ անհիմն կերպով Հայոց Եկեղեցին մեղադրվում է եւտիքեսական հերձվածութեան մեջ, սա եւս հիմք չի տալիս հայ քրիստոնյային վերստին մկրտել, ինչը հակառակ է նույնիսկ իրենց իսկ ընդունած կանոնական որոշումներին: Սակայն մեզ համար առանձնակի կարեւորություն է հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ Հայոց Եկեղեցին եւս կիրարկել է Ընդհանրական եկեղեցում առկա սկզբունքը, ըստ որի՝ կարելի է բավական պարզորոշ եւ հստակ արձանագրել հետեւյալը՝ հերձվածողությունից դարձի եկող անձն եկեղեցական կյանք ընդունվել է երեք կերպով.

Ա. Սբ. Մկրտութեան խորհրդի միջոցով – նրանց համար, որոնց մկրտությունը համարվել է անվավեր կամ առհասարակ նրանց վրա չի կատարվել մկրտութեան խորհուրդը:

²⁶ Նույն տեղում, էջ 258:

²⁷ Նույն տեղում:

Բ. Սբ. Դրոշմի խորհրդի միջոցով – նրանց համար, որոնց մկրտության խորհուրդը ճանաչվել է վավերական, սակայն նրանց վրա կատարված չի եղել Սբ. Դրոշմի խորհուրդը, կամ այն որպես ճշմարիտ խորհուրդ չի համարվել:

Գ. Ապաշխարության խորհրդի միջոցով – նրանց համար, որոնց Մկրտության խորհուրդը եւ մնացյալ մյուս խորհուրդները Եկեղեցին ճանաչել է վավերական:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հերետիկոսություն, հերձված, Ընդհանրական Եկեղեցի, մկրտություն, Սուրբ Դրոշմ, Սուրբ Հաղորդություն, Սբ. Կիպրիանոս, Սբ. Բարսեղ Մեծ, նովատիանոսներ, պողոսյաններ, Կ. Պոլսի տիեզերաժողով, Տրուլլյան ժողով, մկրտության վավերականություն, վերամկրտություն, ձեռնադրություն, ապաշխարություն, աղանդ, ուղղափառ հավատ, վարդապետություն, մյուռոն, կրկնամկրտություն, Միխթար Գոշ, Թուղթ առ վրացիսն, Չաքարյաններ, Վրաց Եկեղեցի, Հայ Եկեղեցի, դավանական տարբերություն, եկեղեցական կանոններ, աղոթակարգ, քաղկեդոնադավանություն, նզովք, խոստովանություն, Սուրբ Երրորդություն, եկեղեցական ծիսակարգ, օծում, Եկեղեցի վերադարձ, Աստվածաշունչ, հերձվածողից դարձ, հայրապետներ, եկեղեցական ժողովներ, սինոդներ, ձեռքը դնելու կարգ, սուրբ ավագան, Սուրբ Հոգի, ծիսական համաձայնություն, եկեղեցական կարգ, աստվածաբանական բանավեճ, կրոնական միասնություն, միավորողական փորձեր:

РЕЗЮМЕ

Данная статья исследует историческое развитие и богословские основы порядка принятия обращённых из еретических общин в лоно Вселенской (Кафолической) Церкви, с особым акцентом на отражение этой практики в каноническом сочинении Мхитара Гоша — «Послание к грузинам».

Автор подробно рассматривает различные способы приема в Церковь: через Крещение, Миропомазание или покаяние — в зависимости от того, был ли человек ранее крещён в еретической общине, и насколько та была удалена от

православия. В работе анализируются труды св. Киприана Карфагенского, св. Василия Великого, решения Никейского и Константинопольского соборов, а также Трулльского собора.

Особое внимание уделено армянской церковной традиции, в частности позиции Мхитара Гоша в его «Послании к грузинам», написанном на фоне напряжённых отношений между Армянской и Грузинской церквями в XII–XIII вв. Гош резко осуждает практику взаимного перекрещивания, считая её противной канонам, и предлагает тройную схему приёма: крещением, миропомазанием или через покаяние. Он опирается как на армянскую, так и на византийскую каноническую традицию (включая источники, отсутствующие в армянских сборниках), чтобы доказать недопустимость перекрещивания армян со стороны грузин.

Статья подчёркивает, что труд Гоша отражает не только полемическую защиту армянской церковной идентичности, но и свидетельствует о восприятии общецерковных принципов приёма еретиков, что подчёркивает согласие Армянской Церкви с широкой христианской традицией.

SUMMARY

This article examines the historical development and theological foundations of the procedure for accepting converts from heretical communities into the bosom of the Universal (Catholic) Church, with a particular focus on how this practice is reflected in Mkhitar Gosh's canonical work, "Letter to the Georgians."

The article traces the early Church's approaches to the reintegration of heretics - distinguishing between those originally baptized in the Church who later deviated, and those who were baptized outside the Church. It outlines different practices (rebaptism, chrismation, or penitential reception) as they evolved in East and West, drawing on key sources such as St. Cyprian of Carthage, St. Basil the Great, and the decisions of the Councils of Nicaea and Constantinople, as well as the Council of Trullo.

Particular attention is paid to the historical response of the Armenian Church tradition, in particular expressed by Mkhitar Gosh in his "Letter to the Georgians," written against the backdrop of tense relations between the Armenian and Georgian Churches in the 12th-13th centuries. Gosh sharply condemns the practice of mutual rebaptism as canonically unlawful, and proposes a threefold model of reception: through Baptism, Chrismation, or Penance,

depending on the nature and origin of the convert's previous affiliation. Gosh uses patristic and canonical sources (including sources not found in Armenian collections) to refute the Chalcedonian practice of rebaptizing Armenians and to affirm the legitimacy of Armenian sacraments.

The study concludes that Gosh's letter reflects not only a theological refutation of external accusations, but also an internalization of the universal Church principles regarding the return of heretics, thereby strengthening the Armenian Church's alignment with the broader Christian tradition.

